

րենց աղօթիւք արժանի լինել գուշակուած մարտիրոսական վախճանին եւ վերին կենաց (Եղիշ. 133-4):

Թէ ինչ եղաւ նուագը, պատմիչը մեզ կը թողու մտածել: Եթէ «սկսաւ մատուցանել» զայն ճառով, ուրեմն այդ խօսակցութեան աւարտելուն մատոյց ալ: Այս ինքն՝ նախ ըմպեց ինք եւ յետոյ այլոց տուաւ ըմպելու այդ առաջին գաւաթէն, ինչպէս կը բաժանուէր առաջին հացը (աստ, 172): Զայս կը թուի ակնարկել նաեւ Տաթեւացին, երբ կը յիշէ զինուոյն «բաժանիլն ըստ կարգի», եւ զոր կը համարի նշան մը՝ «զի հաւասարութիւն ունիմք առ միմեանս» (Քրգ. ամբ. 349), թէեւ չեմ կարող պնդել՝ թէ այս տեղ բուն իսկ մեր նուագի մասին կը խօսի: Ուրիշ միջնադարեան գրչէ մ'ալ գիտենք՝ թէ «մեծ աման ընուն եւ յիրևարս իսկևև. տօստաքան ասեն» (Լծ. Պհ. Գ), որ իւր ծանօթ ձեւով կը տարբերէր հնոց նուագէն (աստ, 69, 77). եւ այս ալ յայտնի չէ՝ թէ առաջին արբումը լինի, թէեւ հաւանական կը թուի երկու վկայութեանց մէջ եւս: Բայց գիտենք՝ թէ մեր ուրախութեան նուագն իւր բոլոր հանգամանօք կար Հրէից (Ղկ. ԻԲ, 17. Վիգ. Բ, 414), Յունաց եւ Հռովմայեցւոց մէջ ալ, թէ հեթանոսութեան եւ